

Հավելված 5

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի

_____ 2019 թվականի

N _____ հրաման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքը (այսուհետ՝ բաժանմունք) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը կրթահամալիրում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

2. Բաժանմունքն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներքին իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3. Բաժանմունքի լրիվ անվանումն է.

Հայերեն՝ «Կրթության որակի ապահովման բաժանմունք»:

Ռուսերեն՝ «Отделение обеспечения качества образования».

Անգլերեն՝ «Education Quality Assurance Department».

4. Բաժանմունքը, որպես ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանում, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

5. Բաժանմունքը, սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով, համագործակցում է կրթահամալիրի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

6. Սույն կանոնադրությունը հաստատվում է, նրանում փոփոխությունները և լրացումները կատարվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:

II. Բաժանմունքի խնդիրներն ու գործառույթները

7. Բաժանմունքի խնդիրներն են.

1) Կրթահամալիրի որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերաբար վերանայում, և իրագործման համար բոլոր մակարդակներում վարչական աջակցության ապահովում:

2) Որակի միասնական չափանիշների պահպանում, կրթահամալիրի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում:

3) Ներքին (սովորողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահառուների առջև կրթահամալիրի կրթության որակի հաշվետվողականության ապահովում:

4) Կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում և կրթահամալիրի ու վերջինիս կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար վարչական օժանդակության իրականացում, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում:

5) Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում:

8. Բաժանմունքի գործառույթներն են.

1) Մշակել, իրականացնել և մշտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցել դրանց արդյունքների մասին կրթահամալիրի պետին, սահմանել միջազգային պահանջներին համահունչ որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ:

2) Մշակել կրթահամալիրի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը:

3) Համակարգել, վերահսկել և գործուն աջակցություն տրամադրել կրթահամալիրի բոլոր ստորաբաժանումներին՝ ՈԱ գործընթացների իրականացման նպատակով:

4) Ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում սովորողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը:

5) Կազմակերպել կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով ինքնագնահատման գործընթացը, արդյունքները ներառել համապատասխան զեկուցում, պլանավորել և վերահսկել վերջինից բխող գործողությունները:

6) Համակարգել կրթահամալիրի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ:

7) Համագործակցել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ:

8) Ապահովել կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը, ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին:

9) Պատրաստել ՈԱ ընթացակարգերի մշակումը՝ կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, ապահովել վերջիններիս իրականացում կրթահամալիրի բոլոր ստորաբաժանումներում:

10) Կազմակերպել ՈԱ ընթացակարգերին համապատասխան կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները,

- 11) Համակարգել կրթահամալիրի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակել դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:
- 12) ՈԱ նպատակով և համապատասխան գործիքակազմի կիրառմամբ (հարցումներ, ֆոկուսխմբեր և այլն) մշակել դասավանդման, սովորողների գնահատման, ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետության գնահատման ընթացակարգեր:
- 13) Համագործակցել կրթահամալիրի գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների, ՈԱ հանձնաժողովների հետ և աջակցել նրանց աշխատանքներին:

III. Բաժանմունքի պետը և աշխատակիցները

9. Բաժանմունքի անմիջական ղեկավարումը իրականացնում է բաժանմունքի պետը, որը նշանակվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

10. Բաժանմունքի պետը՝

1) Պլանավորում, կազմակերպում, և վերահսկում է բաժանմունքի ընթացիկ գործունեությունը:

2) Կրթահամալիրի գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով և զեկույցներով:

3) Ապահովում է բաժանմունքի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ բաժանմունքի փոխգործակցությունը:

4) Բաժանմունքի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում և ստորագրում է զեկույցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր:

5) Բաժանմունքի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության կրթահամալիրի պետին է ներկայացնում համապատասխան զեկույց և առաջարկություններ՝ բաժանմունքի գործունեությանն առնչվող այլ ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ:

6) Կազմակերպում և հսկում է բաժանմունքում տարվող գործավարությունը, իրականացնում է բաժանմունքի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ:

11. Բաժանմունքի աշխատակիցները՝

1) մշակում են ընթացակարգեր՝ կրթական ծրագրերի և առանձին դասընթացների (մոդուլների) մակարդակում դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմի որակի գնահատման համար:

2) Համակարգում են որակի ներքին ապահովման գործընթացների ներդրման աշխատանքները:

3) Իրականացնում են կրթահամալիրի գործունեության հիմնական և սպասարկող գործառույթների որակի բացահայտում մշտադիտարկումների և հետազոտությունների միջոցով:

4) Ապահովում են գիտակրթական գործունեության որակի ապահովման գործընթացի շարունակական բարելավում, գիտակրթական համակարգի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա՝ կրթության որակի կառավարման համակարգի կատարելագործում:

- 5) Իրականացնում են ուսումնառության և դասավանդման որակի գնահատում, ստեղծում է դասավանդման որակի չափման գործիքակազմ:
- 6) Կազմակերպում են SPSS, PSPP, GOOGLE FORMS և այլ ծրագրերի հետ ծանոթացման նպատակով հանդիպումներ կրթահամալիրի ուսումնասօժանդակ կազմի շրջանում:
- 7) Իրականացնում է ուսումնական գործընթացի համար էլեկտրոնային համակարգերի ստեղծման և ներդրման աշխատանքներ:
- 8) Ֆակուլտետներում իրականացնում է հետադարձ կապի ստուգում իրականացված տվյալների հիման վրա փոփոխությունները գնահատելու և ուսումնասիրության արդյունավետությունը որոշելու նպատակով:
11. Բաժանմունքի պետի և աշխատակիցների գործառության պարտականությունները հաստատվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից:
12. Բաժանմունքի աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և աշխատանքային (ծառայությունների վճարովի մատուցման) պայմանագրով, սույն կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սահմանված կարգով հաստատված այլ փաստաթղթերով: